ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Սույն թվականի հոկտեմբերի 11-ին ՀՀ ԱԱԾ աշխատակիցները ձերբակալել են «Միասնական Ձավախք» ժողովրդավարական դաշինքի նախագահության անդամ Վահագն Չախալյանին, որը նախօրեին ծանր մարմնական վնասվածք է ստացել Երևանի մատույցներում նրա դեմ կազմակերպված դարանակալ հարձակման հետևանքով: Ձերբակալության պաշտոնական պատճառաբանությունը՝ «սահմանի ապօրինի հատումը» անհեթեթ է: Այն ակնհայտորեն քաղաքական բնույթի է և ուղղակիորեն առնչվում է վերջին տարիներին ջավախահայության շրջանում Դաշինքի քաղաքական կշռի և հեղինակության աճի հետ:

Պատահական չէ, որ վերջին զարգացումներին նախորդել է հայրենակցական սկզբունքով Երևանում ձևավորված ինչ-ինչ լուսանցքային կառույցների և առանձին քաղաքական ուժերի կողմից «Միասնական Ձավախքի» դեմ ծավալված անբարո քարոզարշավը: Հայաստանյան լրատվամիջոցներում տեղ են գտել ապակողմնորոշիչ, իրականությունը հեղաթյուրող մեկնաբանություններ և հրապարակումներ, չարամիտ և անհեթեթ զրպարտություններ:

Ձավախքի հայությունը խորը վրդովմունք է արտահայտում «Միասնական Ձավախքը» կազմալուծել ձգտող վերոնշյալ կառույցների, քրեական խմբավորումների և նրանց համահունչ գործող պետական մարմինների անվայել քայլերի կապակցությամբ:

«Միասնական Ձավախք» ժողովրդավարական դաշինքը պահանջում է անհապաղ ազատ արձակել անհեթեթ մեղադրանքով ձերբակալված Վահագն Չախալյանին, հայտնաբերել և խստագույնս պատժել նրա դեմ կազմակերպված բռնարարքի պատվիրատուներին և գործադրողներին:

Դաշինքը կոչ է անում վերանայել Ձավախքում հատվածական շահեր հետապնդող ուժերին սատարելու անհեռատես և պայթյունավտանգ քաղաքականությունը: Ժամանակն է գիտակցել, որ մեր հայկական երկրամասում կայունությունը կարող են ապահովել միմիայն ջավախահայության համընդհանուր աջակցությունը վայելող ուժեր:

«Միասնական Ձավախք”
ժողովրդավարական դաշինքի
նախագահություն

15 հոկտեմբերի 2006 թ.
ք. Ախալքալաք

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 15-ն Վրաստան-Հայաստան /Ժդանովական-Բավրա/ անցակետում տեղի ունեցավ խաղաղ բողոքի ակցիա ի պաշպանություն Երևանում ձերբակալված <<Միասնական Ջավախք>> ժողովրդավարական դաշինքի նախագահության անդամ, Ջավախքի երիտասարդական մարզամակութային միության /ՋԵՄՄ/ նախագահ Վահագն Չախալյանի:

Հիշեցնենք, որ դաշինքի նախագահության անդամ Վահագն Չախալյանը, որը հոկտեմբերի 10- ին դարանակալ հարձակման էր ենթարկվել Երևանի մատույցներում և ստացել ծանր մարմնական վնասվածքներ, հաջորդ օրը կալանվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից: Ներկայանալով որպես ոստիկանության աշխատակիցներ, նրանք Վ. Չախալյանին խաբեությամբ, որպես տուժվող կողմ ցուցմունքներ տալու, հրավիրել են իբր ոստիկանության բաժանմունք, սակայն տարել են ԱԱԾ նախաքննական մեկուսարան և կալանավորել: Նրան ներկայացվել է անհեթեթ մեղադրանք՝ ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու վերաբերյալ: Հոկտեմբերի 13-ին նույն անհեթեթ մեղադրանքով Երևանի Կենտրոն-Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը արտոնել է Վահագն Չախալյանին ենթարկել երկամսյա նախնական կալանքի:

Ակցիայի մասնակիցները, որոնց թիվը 400 հոգուց ավելի էր, վրդովված էին հատկապես այն հանգամանքով, որ ավազակային հարձակման ենթարկված և ծանր մարմնական վնասվածքներ ստացած Վահագն Չախալյանի, վերջինիս ընտանիքի անդամների, ինչպես նաև դաշինքի անդամ Գուգեն Շիրինյանի դեմ կատարված բռնարարքը հետաքննելու և վտանգավոր հանցագործներին հայտնաբերելու փոխարեն, մտացածին մեղադրանքներով, հետապնդվում է տուժվողը: Բողոքի ակցիայի մասնակիցները պահանջեցին հանդիպել Հայաստանի հանրապետության կառավարական կառույցներից որևէ մեկի ներկայացուցչի հետ, ով իրավասու էր պատասխանել իրենց հուզող հարցին և պատասխան պահանջել տեղի ունեցած սադրիչ միջադեպի համար, սակայն նրանց հույսերը զուր անցան: Հայաստանի կառավարությունը անտեսեց ջավախահայերի մի հոծ բազմության արդարացի պահանջը և ոչ մի պետական աշխատող չներկայացավ մաքսատուն հանդիպելու բողոքի ակցիայի մասնակիցների հետ, որից հետո ակցիայի մասնակիցներից մի քանիսը հատելով ՀՀ պետական սահմանը պահանջեցին ձերբակալել նաև իրենց, քանի որ առանց համապատասխան գրանցման հատելով Հայաստանի պետական սահմանը, իրենք ևս ենթակա են ձերբակալման և Հայաստանի համապատասխան ծառայությունները պարտավոր են ձերբակալել վերջիններիս որպես պետական հանցագործ, ինչը տեղի չունեցավ:

Երկար և անարդյունք սպասումից հետո, Հայաստանի կառավարության կողմից անտեսված խաղաղ ակցիայի մասնակիցները, թողեցին մաքսատան տարածքը և վերադարձան, որոշելով շարունակել իրենց բողոքի ակցիաները, մինչև հարցի արդարացի լուծում: